«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Արժեքային համակարգի ձևավորումը Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմը ուսուցանելիս

ՀԵՂԻՆԱԿ Սուքիասյան Ազատուհի

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ «Մարալիկի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ 8

«ՀԱՐՃԸ» ՊՈԵՄԻ ԱՂԲՅՈՒՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ 14

«ՀԱՐՃԸ» ՊՈԵՄԻ ԴԻՊԱՇԱՐԸ 16

ԿԵՐՊԱՐՆԵՐԸ 19

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԸ 24

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 26

ԲԱՌԱՐԱՆ 28

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 32

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Իմ կողմից ներկայացվող հետազոտական աշխատանքը կրում է. «Արժեհամակարգի ձևավորում «Հարճը» պոեմը ուսուցանելիս» վերնագիրը։

Թեման ընտրելիս առաջնորդվել եմ նյութում արծարծված գաղափարների կարևորությամբ ու արդիականությամբ։

Հետազոտական աշխատանքի արդիականությունը։

Մեր հասարակական կյանքում ընթացող քաղաքական, սոցիալ - տնտեսական, ինչպես նաև բարոյաարժեքային ոլորտում կատարվող փոփոխությունները նոր խնդիր են առաջադրում հանրակրթական դպրոցին՝ կապված աճող սերնդի կողմից ազգային և համամարդկային արժեքների յուրացման և արժեքային համակարգի ձևավորման անհրաժեշտության հետ։ Հանրակրթության դերն ու նշանակությունն արժևորվում են ոչ միայն աճող սերնդին անհրաժեշտ գիտելիքներով, կարողություններով, հմտություններով ապահովման, այլև աշխարհի, մարդ – բնություն – հասարակություն փոխհարաբերությունների, մշակութային արժեքների նկատմամբ պատկերացումների և արժեքային կայուն կողմնորոշումների ու դիրքորոշումների ձևավորման տեսանկյունից։

ՀՀ պետական չափորոշչում ներառված է արժեքային համակարգի ձևավոումը որպես կրթական բովանդակային բաղադրիչ։ «Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժության մեջ ըմբռնվում է լայն շառավիղով։

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային, էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար։ Արժեհամակարգի մեջ կուտակված՝ անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծա մշակութային արժեքների նկատմամբ հպարտության զգացում։ Ճանաչողության գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների ու

կարողությունների։ Այսօր աճող սերնդի դաստիարակության գործընթացն ուղեկցվում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ազգային, մշակութային, ընտանեկան, սոցիալական, հասարակական և այլն։

Հետազոտական աշխատանքի նպատակը։

Ավագ դպրոցում հայոց և հայ գրականության դասընթացի բուն լեզվական և գրականագիտական գիտելիքներ տալուց բացի պետք է համոզմունք մշակի ժողովրդի կյանքում և նրա ազգային նկարագրի վերջնական ձևավորման վերաբերյալ։ Չափորոշչում նշվում է, որ հայ գրականության դասընթացի հիմնական նպատակներից մեկն է «Անհատի հոգևոր և մտավոր զարգացման, անձի արժեքային համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային խնդիրներին, իդեալներին ու ձգտումներին գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործմամբ նրանց մեջ սերմանել բարոյական արժեքներ՝ մարդասիրություն, ընկերասիրություն, բարություն, ազնվություն լիարժեք ու ներդաշնակ բարոյակամային հատկանիշներ»։

Հայ դպրոցականը գրականության ուսուցման ընթացքում դասեր պիտի քաղի հայոց մեծերի՝ մեր ազգային խորհրդանիշներ հանդիսացող պատմական ու գրական անհատների կյանքի ու գործի դրսևորումներից։

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության ու դաստիարակության գործում լուրջ անելիք ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ։ Ժամանակակից դպրոցի մեջ իր ազգային բարոյակկան ու հոգևոր բնորոշ արժեքների ձևավորումն է ու զարգացումը։ Արժեքներից մեծագույնը հայրենասիրությունն է, որը լավագույնս ներկայացվում է հայ գրականության դասընթացի ժամանակ։

Ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի մշակույթի հիմքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները։

Հետազոտական աշխատանքի խնդիրները։

21 – րդ դարի դպրոցում դաստիարակության ու կրթության գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը։ Այդ ստեղծագործություններում արտացոլվում են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները։ Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, հարատևելու ունակությունը։ Անհրաժեշտ է, որ այս ամենը փոխանցվի էթնոկրին։ Աշակերտը պետք է հասնի այն գիտակցությանը, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է մշակութային արժեքների և՛ ստեղծմամբ, և՛ պահպանմամբ։ Սերունդ, որ կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները։ Փորձենք հասկանալ, թե ինչպես է ձևավորվում ազգային արժեքային համակարգը հայ գրականության միջոցով։

Հայ գրականությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ՝ հայրենասիրություն, ազգային արժանապատիվ գոյություն։ Այս հետազոտական աշխատանքով ներկայացնում եմ մի այնպիսի թեմա, որը շատ մեծ նշանակություն ունի 21 – րդ դարի հայ երիտասարդի դաստիարակության գործում։ Ներկայացվող նյութը միտված է նպաստել ազգային արժեքային համակարգի ձևավորմանը հայ գրականության դասերին։

Դպրոցում սովորողները գրականության շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացմանը, զարգացման օրինաչափություններին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին։ Հայ գրականության առարկայի

ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածողություն, ազգային ու համամարդկային արժեհամակարգ կրող անձ ու քաղաքացի: Այդ պատճառով արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում: Որպես հայ՝ յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա՝ որն է իր անելիքը այստեղ՝ հայրենիքում:

Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմերը, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխան:

Գրականության մեջ առանձնացվում են արժեհամակարգի սահմանում:

Արժեհամակարգը իր մեջ ներառում է գիտակցություն, համամարդկային արժեքներ, միջանձնային հարաբերություններ: Արժեհամակարգ հասկացությունը մանկավարժական գիտակցության մեջ դիտվում է բավականին լայն ասպեկտով:

Իմ նպատակն է. «Հարճը» պոեմի ուսուցմամբ ցույց տալ, թե ինչպես է ձևավորվում արժեհամակարգ գրականության դասերին, բացահայտել արժեքների զարգացման հիմնական ուղղությունները: Պոեմի ուսուցումը ուղղված է հետևյալ **խնդիրների** լուծմանը.

1. նախնիների հոգևոր մշակույթի գնահատում
2. գրական երկի միջոցով ինչպես ինքնաճանաչման, այնպես էլ դիմացինին հասկանալու, արժևորելու ձգտում, նրբանկատություն, նրբազգացողություն
3. հարգանք ուրիշի զգացմունքների նկատմամբ
4. սեփական անձի անաչառ ինքնագնահատում
5. ինքնադաստիարակման ձգտում՝ հերոսների կերպարների միջոցով
6. գրական – գեղարվեստական ճաշակ
7. գեղարվեստական խոսքով հաղորդվող հույզերի, զգացմունքների ընկալում

8. գրական հերոսների օրինակով սովորողների մեջ դաստիարակել բարոյական բարձր հատկանիշներ՝ ազնվություն, բարություն, վեհանձնություն, պատվախնդրություն, պատասխանատվության զգացում, քաջություն, լիարժեք ու ներդաշնակ մարդու բարոյակամային այլ հատկանիշներ

9. սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը, ազգային ու համամարդկային իդեալներին ու ձգտումներին։

Գրականության դասավանդումը բացառիկ դեր ունի անհատի, պետականամետ հայ քաղաքացու արժեքային համակարգի, նրա բարոյական նկարագրի ձևավորման գործում։

Հայ գրականությունը հնարավորություն է տալիս խորությամբ ընկալելու հայ մարդու արժեքային համակարգը, ժողովրդի կենցաղը, նիստուկացը, հավատալիքները, ավանդույթները։

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, հետազոտական մասին, եզրակացությունից, գրականության ցանկից։

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԸ

«Ըստ իս և տակավին ինձ համար՝ ահա օրենքս՝ մեր գրականության մեջ արվեստը հայ պիտի ըլլա, իսկ անոր հատակը կամ հիմքը կազմող գաղափարը՝ համամարդկային»։ [Ս. Աղաբաբյան, Դ. Վարուժան, Երևան 1980, էջ 48]։ Սա էր Վարուժանի հավատքմը։

Դանիել Վարուժանի ինքնատիպ ու զորեղ տաղանդը ձևավորվել է բարդ ու հակասական ազդեցությունների ոլորտում տարբեր գաղափարական ազդեցությունների ներքո է ձևավորվել նրա աշխարհայացքը. «Երկու միջավայր ազդած են իմ վրա. - Վենետիկը՝ իր Թիցիանով և ֆլանդրը՝ իր ՎԱն – Տոեգնորով», - և ապա ավելացնում, որ առաջին միջավայրից ժառանգել է գույների ճոխությունը, երկրորդից՝ «բարբարոս իրապաշտությունը»։ [Լ. Մնացականյան, Քսաներորդ դարասկզբի արևմտահայ հայ գրական քննադատություն, Երևան 1990, էջ 163]։ Նորարարական որակը Վարուժանի պոեզիայում ստեղծվեց հայկական և եվրոպական ազդեցության խաչաձևումով։ Վարուժանը գաղափարի բանաստեղծ էր։ Իսկ գաղափարի միջուկը հայրենիքն էր։

1906թ. տպագրության է հանձնվել «Սարսուռներ» խորագրով առաջին ժողովածուն, որը հրատարակվել է Վենետիկում՝ Ս. Ղազարի Մխիթարյան միաբանության տպարանում։ Ինչպես վկայում է խորագիրը, նա պատմելու էր կյանքի սարսուռներից, մարդկային տառապանքներից ու վշտերից։ Համիդյան մահաշունչ իրականությունը թունավորեց նրա մանկությունը։ Նա ականատես եղավ սպանդին... ու նրա պատանի հոգին այրվեց ցավից։ Նա մեծ վիշտ ապրեց, ու այդ վշտի մեջ էլ մեծացավ հայրենիքի հանդեպ տածած նվիրական սերը։ Մանկության լսածի ու տեսածի հետևանքը եղավ «Սարսուռներ»- ը, մի ժողովածու, որն իր անհատականության կնիքն ուներ, և որն այնքան ցնցող պատկերներով վերարտադրեց հայի անլուր տառապանքը, նրա ողբերգական վիճակը։

Բանաստեղծը առաջին այս գրքով մերկացրեց սոցիալական անհավասարությունը, պատկերեց բախտի քմայքով օտարության մեջ տառապող

հայ պանդուխտի թշվառությունը, բարբարոսի ձեռքով մոխրակույտի վերածված հայ գյուղերը, ավերակների մեջ շրջող այն թշվառ մորը, որն իր երեխայի մերկությունն ծածկելու համար «կտոր մը» քար է որոնում։ Սակայն այս ամենի հետ միաժամանակ բանաստեղծը փառաբանել է քաջությունը, դրվատել ըմբոստությունն ու հերոսականությունը։ Գրքում զետեղված են 18 քնարական բանաստեղծություններ։ «Մուսային» քերթվածքում, որով բացվում է շարքը, հասուն տաղանդի գործի է։ Թեև մուսան զգուշացնում է սպասվող դժվարությունների մասին, սակայն բանաստեղծը անվարան ձեռքն է վերցնում այդ քնարը՝ պատմելու կյանքի դժվարություններից, թշվառություններից և հնչեցնելու արդարության ընդվզման նվագներ։ Նա արտահայտել է իր կարեկցությունը խեղճ ու տնանկ, անոթի ու հիվանդ կյանքի խաչուղիներում մոլորված մարդկանց։

- Ի՞նչ այս քնարը կուզես, քնար սև փայտե՛, -
Այս վերքերս գործի մըն է, այս հուր,
Ապագայդ է, այս՝ դագաղդ է, անունդ է...

Ըլլա՛, տուր։ [Ցեղին սիրտը, արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ., էջ 358]

Հենց այդ քնարն է, որ նա մինչև իր ողբերգական մահը պահեց իր ձեռքում, իր երկփեղկված հոգու մեջ։ Այս բանաստեղծությունը մի սեղմ նախաբան է նրա ստեղծագործության համար։ Այստեղ առաջ քաշած խնդիրները նա զարգացրել է իր ողջ պոեզիայում, ընտրելը արվեստը ժողովրդի կարիքներին ծառայելու դժվարին ուղին։

Փշապատ, տանջալի է այն ուղին, որով անցնում է հայ մարդը, որը նաև բանաստեղծին էր վիճակված։ Ի վերջո նա ցանկանում է կայծ ու կրակ վառել սերունդների սրտում, բարձրացնել նրանց ոգին, արիություն ներշնչել՝ կռվելու համար կյանքի դեմ, բախտի դեմ, ուժող խլելու այն, ինչ զլացել է բախտը լծի տակ տառապող ժողովրդին։

Զգայուն ու դյուրաթեք է Դ. Վարուժանի հոգին, նա հոգու ամբողջ էությամբ բանաստեղծ էր։

Բանաստեղծի դավանանքը կերպավորում, մարմին ու շունչ է ստանում իրական կերպարների միջոցով. «Ցեղին սիրտը» ժողովածուում, որը լույս է տեսնում 1909թ. սա երկ էր հայ պոեզիայի զարգացման մեջ։ Վարուժանը հռչակվեց, որպես՝ «գրական ֆիտայի», «ազգային երգիչ»։ Ըստ հուշագիրների՝ հայ ազատամարտիկներն այն պահում էին իրենց մախաղների մեջ՝ փամփուշտների և մի կտոր հացի հետ մեկտեղ։

Այն բաղկացած էր երեք մասից, որոնք կրում են «Բագինին վրա», «Կրկեսի մեջ», «Դյուցազնավեպեր» խորագրերը։ «Ցեղին սիրտը» բացվում է «Զոն» բանաստեղծությամբ։
Խրոխտ ու վսեմ է հնչում Վարուժանի «Զոն» - ը։ Կարծես նրա ձայնը ելնում է հին դարերի հայ ժողովրդական հրեղեն եղեգնափողից։ Դա այն նվիրական փողն է, որից ծնվել են մեր տոհմիկ երգերը՝ վեհաշուք ու հզոր, ինչպես ծուխը ծիրանի և բոցը եղեգնափողի։

- Ընդ եղեգան փող բոց ելաներ...

Հայրենիքի փրկության ճանապարհը կերտվում է միայն պայքարի միջոցով։

Եղեգնյա գրչով երգեցի փառքեր,

- Քեզի ընծա իմ հայրենիք –

Սոսյաց անտեռեն էի զայն կըտրեր...

Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր,

Ընդ եղեգան փող լույս ելաներ... Ցեղին սիրտը, արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ., էջ 368]

Սա այն շրջանն է, երբ ամրապնդվեց հայ պետականությունը, հաղթանակների մեջ կոփվեց հայի անընկճելի ոգին ու հասավ մինչև մեր օրերը։ Այդ շրջանը հեթանոսական շրջան էր, երբ անպարտելի էր հայը։

Հաջորդում է գրքի «Նախերգանքը»՝ «Նեմեսիս» - ը։ Վրեժի դիցաբանական աստվածուհին հենդես է բերվում իբրև ժողովրդական ցասման ու ընդվզման խորհրդանիշ։

Ահա բանաստեղծի առաքելությունը՝ լսել ցեղի սրտի զարկերակը և համախմբել արդարության պայքարով՝ իր իրավունքները պաշտպանելու գաղափարի շուրջ։ Նա կերտում է Նեմեսի արձանը և քանդակում մարդկանց հոգիների մեջ։

«Բագինների վրա» շարքը շարունակում է հայրենասիրական շունչը։ Որպես նվիրում՝ բագինների վրա է դրվում անմնացորդ սերը հայրենիքի հանդեպ։ Կյանքի ու սիրո երգը երգելու համար ծնված բանաստեղծը ակամա դառնում է հոգեհանգստի մասնակից, թաղման հուղարկավոր։

«Կրկեսի մեջ» շարքում շարունակվում է հայրենիքի նույն գերխնդիրը։ Պոեմները բնորոշել է որպես դյուցազնավեպ, որոնց մեջ փառաբանվում է հերոսությունը։

1912թ. լույս տեսավ Վարուժանի «Հեթանոս երգեր» ժողովածուն՝ բաղկացած 2 շարքից՝ «Հեթանոս երգեր» և «Գոգոթայի ծաղիկներ», որոնք հակադրված են իրենց գաղափարական ուղղվածությամբ։ «Դարերու կյանքը կերգեմ հանուն հաճույքի և տառապանքի գեղեցկության»[Հ. Ռշտունի, Դ. Վարուժան, Երևան 1961թ. էջ 192]

Հավատարիմ մնալով իր պատոսին՝ նոր ուղիներ է նշում, բանաստեղծական նոր, անսովոր խոսք է ասում. կատարյալ ձգտման ճանապարհը անցնում է մի այնպիսի ոլորապտույտով, որը լցված է ցավի ու հաճույքի, հաճույքի ու ցավի խառնարանով։

Եթե առաջինի մեջ/ «Հեթանոս երգեր»/, Գեղեցիկի ու Զորության պաշտամունքն է, ապա երկրորդում՝ /«Գողթան ծաղիկներ»/ ոգու խեղճությունը, տառապանքն ու ցավը։ Այդ պատճառով էլ առաջինին բնորոշ է «ցավն հաճույքին», իսկ երկրորդին՝ «հաճույքները ցավին»։ «Հաճույքի ու տառապանքի»

համատեղ գոյության դավանանքը առավել ուժգին և առավել ընդգծված արտահայտվել է. «Հարճը» պոեմում։

«Վարուժանի ամբողջ պոեզիայի էությունը հենց այդ երկու հակադիր ծայրերի միասնական արտահայտությունն է՝ հաճույքի զգացումը ցավի զգացման հետ և ընդհակառակը» Այս այլ բան չէ, քան արտահայտություն երկփեղկված հոգու»[Պ. Սևակ Վարուժանի պոեզիան Հ. Ե. Երևան 183թ. էջ 507]

«Հեթանոս երգերով» - ով նշանավորվեց նրա արվեստի հերթական շքեղ թռիչքը։ Այդ գրքով նոր ուղիներ բացեց, հեղաշրջեց նախկին չափանիշներն ու ըմբռնումները։

Շարքերը համապատասխանաբար կրում են «Փառք սարբինային – Բագոս կը պսակի» և «Փառք սարբինային – Քրիստոս կը պասարագե»։ Նա փառաբանում է խչմարը, որի շնորհիվ խաղողի որթը պտուղ է տալիս, իսկ այդ պտուղից գինի է ստացվում։ «Հեթանոս երգեր» շարքում այդ գինու և խրախճանքի աստված Բագոսին։ «Գողգոթայի ծաղիկներ» շարքում «Քրիստոս կըպատարագե» [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 471] տողն է, որ գինին մատուցվում է որպես Քրիստոսի արյուն, և ամբողջ շարքին հիշեցնում է Քրիստոսի տառապանքները՝ 20 – րդ դարի մարդկանց տանջանքների ցուցադրումով։

«Հարճը» պոեմի բնաբանը առանձնացվում է։ Այն այսպիսիսինն է՝ «Փառք սարբինային – Ներոն կարբենա»։ Նա փառք է տալիս խչմարին՝ որթատունկի ծանրությունը կրող և գինու արարումին այնքան նպաստող սարբինային նաև այն պատճառով, որ անգամ Ներոնի պես դաժանագույն մեկի մեջ «արբեցնող գինին» կարող է արթնացնել մարդուն։

Եթե երկու նախորդ բնաբաններին համապատասխան են շարքերի բովանդակությունը, ապա այստեղ հակադրվում է պոեմի գաղափարին։ Տրդատի արարքը ներոնացին գազանություն չէ, այլ այն միայն ժամանակակից մարդու աչքերով է այդպիսին։

- Եվ այժըմ մարդն այս դարուն, մարդն ըղեղին տակ կըքա

Ո՜վ ասպետներ հեթանոս, եթե բախե ոտքն հանկարծ
Ձեր բազուկի մեկ ոսկրինէ որ հողին տակ ճերմկած է

Անոր հըսկա զանգվածեն կըսարսափի, կը կարծե

Ձեզ առասպել դարերու առասպելյալ գազաններ,

Ո՜վ ասպետներ հեթանոս, ո՞վ ասպետի ոսկորներ [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 481]

«Հացին երգը» հայ գեղջուկի «մարգարտյա քրտինքներով [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 353] բարիքի ստեղծումն է. արարվում է սրբազան հացը, որը հաստատում է մարդու՝ երկրի վրա երկրորդ արարիչ լինելը։ Գաղափարական առանցքը աշխատանքի փառաբանումն է՝ մաճկալի հնձվորի, կալվորի կերպարներով, որոնք մարդկային արդարության, բարության, ազնվության ու խղճի, ուժի ու գեղեցկության կրողներն են։ «Հացին երգ» խաղաղ, շինարար աշխատանքի, բեղուն վաստակի փառաբանումն է որպես հաճույքի և ուրախության աղբյուրը։

Կերգե՛ն տըղաներ, խըթանելով միշտ

Կողը եզերուն...

... Կերգեն ճըպուռին մանգաին նման

Կ՛երգեն հովի պես

Մինչ հասնին կալերն ու հոն տարածեն

Հունձքը ծովի պես... [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 508]

«ՀԱՐՃԸ» ՊՈԵՄԻ ԱՂԲՅՈՒՐԸ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Խորենացու «Հայոց պատմության մեջ Վարուժանը գտավ քաջության ու ասպետական արարքի մասին պատմող մի գեղեցիկ դրվագ, որն էլ պատմական ատաղ հանդիսացավ «Հարճը» պոեմի համար։

Խորենացին գրում է. «Բագրատունյաց ցեղից կար մի ոմն Տրդատ, քաջ Սմբատի Սմբատուհի դստեր որդին, մի սրտոտ և ուժեղ մարդ, կարճ հասակով և տգեղ կերպարանքով։ Նրան Տիրան թագավորը իրեն փեսայացրեց՝ իր Երանյակ դստերը նրան կնության տալով։ Կինը չսիրեց իր ամուսին Տրդատին, արհամարհում էր նրան, հոնքերը կիտում, շարունակ իրեն վայ տալիս, որ իր նման չքնաղ ու ազնվական կինն ստիպված է մի տգեղ ու հասարակ ծագումից մարդու հետ ապրել։ Սրա վրա զայրանալով՝ Տրդատը մի օր սաստիկ ծեծում է նրան, և կտրելով «զդեղյան հերսն և զվարսիցն փետյալ զխոպոպիս», հրամայում է քաշեքուշ դուրս գցել սենյակից։ Իսկ ինքն ապստամբելով գնաց Մարաստանի ամուր կողմերը։ Երբ նա հասավ Սյունաց աշխարհը, այստեղ նրան հասավ Տիրանի մահվան լուրը, ուստի այդտեղ էլ մնաց։[Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 2009թ. էջ 150] Խորենացին շարունակում է. «Մի օր Սյունաց Բակուր նահապետը նրան ընթրիքի հրավիրեց։ Երբ գինով ուրախություն էին անում, Տրդատը տեսավ Նազենիկ անունով հարճին՝ «զի հույժ գեղցիկ էր , և երգեր ձեռամբ»։ Տրդատն այդ կնոջն իրեն քաշելով, սեղանակիցների առաջ գգվում, համբուրում էր նրան սիրահարված անզուսպ երիտասարդի նման։

Բակուրը խանդելով վեր կացավ, որ կնոջը նրա ձեռքից խլի» Բայց Սմբատը ոտքի ելնելով ծաղկամանն իբրև զենք գործածեց, սեղանակիցներին էլ սեղանից վանեց։ Կարծես մի նոր Ողիսևս էր առաջ եկել, որ կոտորում է Պենելոպեի սիրահարներին։ Այսպես իր կացարան հասնելով՝ իսկույն ձի հեծավ և հարճի հետ միասին Սպեր գնաց» ։[Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 2009թ. էջ 151]

Պատմության մեջ Տիրան թագավորը Արտաշես 1 – ինի որդի Տիրան Ա – ն է / Ք.Ա. 115 – 95թթ/, որը հայտնի է նաև Տիգրան – Տիրան անունով։ Խորենացու

խոսքերով Տրդատը գնում է Սպեր, որը հեռու էր Սյունաց աշխարհից և գտնվում էր Բարձր Հայքում։ Իսկ Վարուժանի պոեմում Տրդատը Նազենիկի հետ սահմանն անցնելով՝ հասնում է Շիրակ, որը պատմական տարածքներով սահմանակից էր Սյունաց աշխարհին։

Թեև Խորենացին հնագույն զրույցը վերարտադրել է ներդաշնակել է իր «Մատյանի» շարադրանքին, բայց դարձյալ նյութի վիպականությունը ակնհայտ է։

«ՀԱՐՃԸ» ՊՈԵՄԻ ԴԻՊԱՇԱՐԸ

Հավատարիմ մնալով պատմական բովանդակությանը՝ Վարուժանը այն լրացրել, տրամաբանորեն զարգացրել և ստեղծել է մի գեղեցիկ վիպերգ։ Իր վառ երևակայությամբ վրձնել է հեթանոս դարերի ոգին՝ տուրք տալով ասպետականությանն ու հոգու ազատությանը։

Պոեմի դիպաշարն սկսվում է այսպես.

Գարնանամուտ երեկո մի պալատին մեջ մարմար

Բակուր Սյունաց Նահապետ, շքեղ հանդես մը կուտար,

Երբ ՈՒղևոր մը հանկարծ մըրրկարշավ կը հասնի

Լուսընկափայլ ճամփայեն՝ մեծ դրոան քով արքենի [Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 455]

Սյունաց նահապետ Բակուր իշխանը մի երեկո շքեղ հանդես է կազմակերպում։ Այդ օրը նա իր պալատում հյուր է ընդունում հայոց Տիրան արքայի փեսային՝ Տրդատ Բագրատունուն, որը փախչել էր թագավոր – աներոջ զայրույթից և շարժվում էր դեպի Մարաստան։ Նա ծեծել և պալատից վռնդել էր կնոջը՝ Տիրանի աննման դստերը։ Եվ որպես անարգանք՝ կտրել էր իրենից մշտապես դժգոհ կնոջ խարտյաշ գանգուրները։ Բակուրի պալատում «կոչանք» էին եկել «մեծամեծերն հայկական», որոնք սեղանի շուրջ էին բազմել «ոչ իրենց մեծանուն աստիճանի համեմատ, այլ սուտերու մեծության» [Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 458] Քանի որ Տրդատը հյուր էր, նա բազմել էր Բակուրի կողքին։ Իսկ կողքի սրահում խրախճանում էին կանայք։ Գեղեցիկ ու գունեղ է խրախճանքի նկարագրությունը։ 20 սյուներով կառուցված հսկայական սրահում խնդություն է, ծիծաղի ու լույսի ծով։ Մատռվակները գինի են լցնում, իսկ սպասավորները որսի խորտիկներ են մատուցում» Ծավալվում են զրույցն ու երաժշտությունը։ Այդ բուռն եռուզեռի ժամանակ էլ մեկը գուժում է Տիրան արքայի մահվան լուրը. նա ռել էր Մասիսի ձյուների մեջ։ Այս լուրը Տրդատի սիրտն արբեցնում է «բերկրանքներով անպատ»

- Խըմենք, ըսավ, ու տոնենք Արշակունի գահերուն

Թավարումներն անդունդի և մեղկունքի մեջ փըրցուն [Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 458]

Եվ հենց այդ պահին նա հայացքը մի կնոջ զույգ աչքերի է հանդիպում. «Կին մը իրեն կը նայեր, կը զգար սըրտին մեջ շըմոր...»

Այդ կինը վարձակ Նազենիկն էր։ Տրդատը ծոցից հանում է խարտյաշ մազերի փունջը և սրբում գինոտ բերանը։

Խնջույքը դառնում է կատարյալ, երբ իր նվագով և «մսեղեն աղ» հիշեցնող պարով բոլորին հիացնում է Նազենիկը։

-Վարձակն ահա, տեղ բացեք, վարձակը, վարդ տեղացեք.

Մազերուն մեջ, ոտքին տակ մարգարիտներ լեցուցեք։-

Սանդուղներեն վերանատան վար կիջներ կին մը խաժակ

Ճաճանչավուխտ քողին մեջ, աստըղ մըն էր՝ ան որուն մեծ

Աչքերուն մեջ սևեռուն Տըրդատ գինին իր խըմեց։

Հավաքվածները սրահի մեջ տեղ են բացում, և ասպարեզ է մտնում նա, ում աչքերի մեջ Տրդատը նայել էր։ Նազենիկը պարում էր 6 գուսանների նվագակցությամբ։ Հնչում են մեհենական պարեղանակներ, մրրկում է նվագի ծովը, և այդ շիկացած մթնոլորտում իր պարն էր պարում Նազենիկը։ Դա սիրո աստվածուհուն՝ Աստղիկին ձոնված հեթանոս պար է. «գեղեցկության աղոթք» կարծես կրակի պար լինի, հրեղեն մրրիկ։ Նազենիկի վերջին ճախրի պահին Տրդատը բռնում է նրա բազուկից և նստեցնում ծնկին։ Փաղաքշում է ոսկեհեր գլուխը, գինի է խմեցնում ու համբուրում գինոտ շուրթերը՝ իր արարքներով վիրավորելով Բակուրին։

Բոլորը թափվելիք արյան հոտ էին առնում։ Նա խնդրում է Բակուրին, որ իրեն տա վարձակին։ Բակուրը մերժում է՝ ասելով, որ Նազենիկն իր հարճն է, ում Վրաց երկրում նիզակով է նվաճել։ Զայրույթից այրվում է Բակուրը՝ ձեռքի

մեջ ճմլելով նուռը։ Վրա է հասնում, որ ազատի հարճին ու ջախջախի ասպետի գլուխը։ Բակուրի ընդվզմանը ի պատասխան՝ Տրդատը հրեղեն սյունի նման կանգնում է դահլիճի մեջ՝ ձախ ձեռքով գրկելով Նազենիկին։ Նա համոզված էր, որ «էգ վագրի հոտն ըմբոշխնել արու վագրին է տրված»։ [Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 462] Տրդատը վերցնում է սեղանին դրված մետաղյա ծանր սկուտեղն ու հարվածում Բակուրին՝ վնասելով նր ունկը։ Այս ամենը տեսնելով՝ սարսափահար Նազենիկը խնդրում է Տրդատին տանել իրեն այստեղից հեռու, քանի որ ինքը կարող է զոհ դառնալ նահապետի ոխին։

Առավոտյան թզենու տակ Նազենիկը սպասում է իր ազատարարին... Եվ ահա լսվում է ձիու խրխինջը։ Նազենիկին իր գիրկն առած՝ ճամփա են ընկնում։ Բայց հանկարծ հեռվից լսվում է խուլ դղրդյուն. Բակուրի արձակած նետը խոցում է Նազենիկի ծոծրակը։ «Զարնված աղվոր» աղավնու նման տրոփում է և հանգչում։

Պոեմի ավարտին Տրդատը դադար է տալիս մի իջևանատան մոտ և տեսնում ՆԱզենիկի անշունչ մարմինը, որ «լուսարձան» ասես լիներ։ Եվ այդ ապառաժ մարդը արտասվում է կյանքում առաջին անգամ՝ սիրո մաքուր արցունքներով։

Վերջերգում ներկայացնում է, որ իջևանատան մոտ կար բարդի, որն «ոստ առ ոստ» չորանում էր։ Տրդատը Նազենիկին թաղում է այդ բարդու տակ։ Չորացող բարդին վերընձյուղվում է նորից, նոր կյանք է առնում՝ սկվելով հարճի մարմնի ավիշներից։ «Նազենիկի հոգին բնակվում է բարդու տերևների մեջ և հովերի հետ պար գալիս՝ հնչեցնելով իր բամբիռները»։[Հայ գրականություն, Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան, Երևան 2010թ. էջ 100]

Չքնաղ հոգին վարյակին բնակեցավ դար մ’ամբողջ,

Լուսընկային ժպտեցավ, ծոծրակին վերքը տվավ՝ ցույց

Հովերուն հետ պար եկավ, բամբիռներն հնչեցուց։

Չքնաղ վարյակի հոգին խառնվում է հավերժ նորոգ բնությանը։

ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

«Հարճը» ձոն է՝ Գեղեցկությանը, Զորությանն ու Ասպետականությանն։ Գեղեցկությունն ու վայելքը քանդակվում են Նազենիկի կերպարում։ Նազենիկը դրանց խորհրդանիշն է։

Իր բանաստեղծական ձիրքը թաթախելով բաբախուն հույզերի մեջ՝ Վարուժանը կերտել է երկնային մի խորհրդանիշ՝ Աստղիկ աստվածուհուն հավասար մեկին՝ Նազենիկին, որը նազելագեղ անունով է հայտնի։

... Նազենիկ նախ կ'օրորե մեղմորեն

Ալապատրե ուսերուն վըրա գըլուխն հըրեղեն՝

Ներկաներուն շըրջելով զույգ մը աչքեր աղվոր՝

ՈՒր կ'ընկղմի մարդ հեշտին, բայց դուրս կ'ելլե վիրավոր [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 460]

Պոեմում քայլ առ քայլ ամբողջանում է Նազենիկի կերպարը ցուցադրելով մարմնի բոլոր բարեմասնությունները։ Նազենիկը հանդես է գալիս այնքան նուրբ ոսկեթել հանդերձով, որի միջից գրեթե ամբողջովին երևում է նրա մարմինը՝ «ազդրերուն գաղջությունն ու կաթնագույնը սընդոս։ [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 459]

Իր արտաքին գեղեցկությամբ նա հիշեցնում է գեղաքանդակ մի արձան, որ մարմնի բյուր ձևերով կենդանություն է ստանում մրրկաշունչ պարի մեջ.

... Բոլորը լուռ, սալացած՝ ըզմայլնքեն գեղեցկին,

Կը դիտեն մրրիկն այդ կնոջ գանգոիրներուն մետաքսե։

Ան կը ճախրե, կատաղորեն կը ճախրե...

... Հոգվույն մեջ ծով, շուրջը՝ լույս, ան Կիպերյան Աստղիկն [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 461]

Առնական ու կորովի Տրդատը որսում է Նազենիկի հայացքը գերվում նրա պարով, որը կախարդական ազդեցություն է թողնումմ ասպետի վրա՝ թափանցելով մինչև հոգու խորքը։

Ճաճանչավուխտ քողին մեջ աստղ մ'էր ան՝ որուն մեծ

Աչքերուն մեջ սևեռուն Տրրդատ գինին իր խըմեց։ [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 459]

Իսկ այդ պարը... հմայում է բոլորին, որոնք «տոփանքն ու անէական դիտում էին այն.

Այսպես պարեց վարձկանն ալ, մինչև որ քողն հոգիին

Հոն թաթախեց դիրտին մեջ ամեն մարդու բաժակին։

Այդ պա՛րը... խենթացնող ու անկաշկանդ տարերքի մեջ թևածում է նա։ Այն կարծես մարտահրավեր լիներ իր գերությանը, փոթորկան ընդվզում՝ միապաղաղ ու տաղտակ կյանքի դեմ։ Այո պարի մեջ հարճի մարմինը վերածվում է կենդանի նվագարանի։

Մարմինն ընդհուպ կը զուփա, կու տան ոտքերը դըռույթ,

Եվ այն իր իսկ շառմին անդունդի մեջ հորձանուտ։

Կարծես վայրկան մը այլևըս աչքերն կանհետի՝

Ինչպես երկնի մեջ կորսվող լուսադայլայլը մեղեդի [Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 460]

Տրդատն հավատացած է, որ եթե նույնիսկ Աստղիկ դիցուհին տրվեր Վահագնին, ապա այսպիսի հրաշք չէր բողբոջի։ Բռնությամբ հարճ դարձած Նազենիկը ամբողջությամբ լույս ճառագում, մաքրություն ու քնքշություն, և երբ զգում է սիրո շունչը, անմիջապես նետվում է դեպի այդ փրկարար ուժը։

Նա պարում էր ոչ թե Բակուրի կամքի թելադրանքով, այլ Տրդատի սիրո մղումով։ Հանուն այդ սիրո նա գինի է խմում Տրդատի ձեռքից, խմում հոժարությամբ՝ «ժպտալով հեշտագին»։ Հարճի լուսեղեն էությունն ամբողջանում

է Տրդատի բնորոշմամբ. «Արշալույսին թող մեկնիմ՝ արշալույսն այս գրկիս մեջ»։ [Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 460]

Տրդատը նրա փրկիչն է, նրա պաշտպանը։

Նազենիկի և աղավնու զուգահեռը շատ գեղեցիկ է արված, առավել գեղեցիկ է «զարնված աղվոր աղավնու» պատկերը, իսկ մահը կարծես երկնային հրաշքի կործանումն է. «կը փըշրվեր ու կ'իյնար դաշնակության ո գեղի աստվածակերտ գոհար ...» [Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 469]

Գեղեցիկը հենց այնպես չի կարող ոչնչանալ այն անմահ է, գեղեցիկը բնության մի մասնիկն է։

Նազենիկի սիրտը հավերժանում է ու վերապրում բնության հետ։

Տրդատ - Այսպես է Խորենացին ներկայացնում Տրդատին. «մի սրտոտ և ուժեղ մարդ, կարճ հասակով ու գծուծ արտաքինով» [Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 2009թ., էջ 150] Վարուժանը, համաձայն իր նպատակադրման Տրդատին օժտել է արտաքին գեղեցկությամբ՝ շեշտը դնելով առնականության ու հզորության վրա։

Գեղեցիկ է ու լայնալանջ, պարթև է ու հաստաբազուկ։ Նա իր «առնագեղ, խրոխտ ու հզոր» արտաքինով գերում է Նազենիկին։

Հըզոր՝ վիզովն առյուծի և բիբերով աստղահեռ՝

Որոնց բոցեն այրելու համար անգամ մ'իսկ բավ էր,

Որ անոնց մեջ հանդրգներ առնաբաղձ կին մը նայիլ

Հըզոր՝ մարտիկ գըլուխով, լայնչի լանջքով անարգիլ

Որ ճռնչունին մեջ կուռեր կոհակի պես փըրփրազեղ։

Հըզոր՝ թիկնով մեծադիր բազուկներով առնագեղ

Որոնց միջև կը սիրեն կիներն իբր օձ գեղաձալ

Բյուր ձևերով գալարվիլ ու ծրվարիլ ու տաքանալ։ [Հ. Ռշտունի, Դ. Վարուժան, Երևան 1961թ. էջ 197]

Նա իր քաջությամբ և ուժով, հախուռն զգացմունքներով և համարձակությամբ, անձնվիրությամբ ու մարդասիրությամբ կատարյալ ասպետ է, որ պաշտում է Գեղեցիկն ու Զորությունը. անկեղծն ու վսեմը։ Նրան խորթ է ստրկական համակերպության ոգին, ուստի չի հանդուրժում կնոջ՝ արքայադստեր գոռոզամտությունը, քամահրանքը։ Չի կեղծում, չի ստրկանում արքայական կամքի առաջ, այլ ընդվզում է նրա դեմ։ Ինքնատիպ է Տրդատի կերպարը։ Տրդատը խմում է Վանատուրի և Աստղիկի կենացը, որոնք խորհրդանշում են «հուրն արու» և «հողն հեշտագին», հետո գինոտ բերանը սրբում է իր կնոջ մազերով՝ ծաղրելով «այն էջն անուղղա»։ Քայլ առ քայլ մեր առջև ամբողջանում է նրա ասպետական էությունը։ Անկեղծ է սիրո և ցասման մեջ. Տրդատը կանգ չի առնում կես ճանապարհին, չի խորամանկում, չի խուսանավում։ Նազենիկին նստեցնում է ծնկանը և խմեցնում «դաշխոտանի» գինին, հետո համբուրում գինոտ շուրթերը։

Տրդատը պատրաստ է հարճի համար կռվել Բակուրի հետ, որովհետև համոզված է, որ «էգ վագրին հետ ըմբոշխնել արու վագրին է տրված»։

Վտանգի պահին նա չլքեց Նազենիկին, աներկյուղ, «ժայռի պես կանգուն» պաշտպանեց նրան։ Տրդատը փախցրեց հարճին՝ փորձելով ազատել Բակուրի զայրույթից։ Նազենիկին գիրկն առած նա սլանում էր դեպի Շիրակ։

Կերպարն ամբողջացնելու համար Վարուժանը պոեմն ավարտում է Նազենիկի մահով։ Երբ ասպետը հասկանում է, որ իր գրկում չքնաղ Նազենիկի «սառած մարմինն լոկ», նա ապրում է «կատաղությունն ահավորը ասպատական խաբկանքի» [Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 470]։ Առեղծվածային գեղեցկությունն ու սերը կործանումից փրկելու իր գերհզոր ջանքերն ապարդյուն էին անցել... Վայրկյաններ էին մնացել հասնելու փրկարար հանգրվանին։ Ծանր հոգեկան ողբերկություն է ապրում Տրդատը. «Եվ առջի հեղ ըլլալու ապառաժ մարդն այդ լացա՜վ...»[Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 470]

Այդ առնական ու քարեղեն մարդու մեջ բույն էր դրել անսահման բարի ու ցավակից մի սիրտ։

ՈՒժեղ, գեղեցիկ մարմնի մեջ ամփոփված է նույնքան ուժեղ ու գեղեցիկ հոգի։

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԸ

«Հարճը» իր ժանրով քնարապատմողական պոեմ է: Դրամատիկ զարգացումներին զուգահեռ պոեմում կան նկարագրություններ և քնարական խոհեր:

Պոեմը կազմված է 600 տողից, յուրաքանչյուր տողը՝ 14 վանկից՝ 7 - 7 բաժանումներով:

Պոեմի գաղափարը խտացված է քնարական զեղման մեջ, որն սկսվում է ասպետական ժամանակների փառաբանությամբ:

- Փա՛ռք մեծազոր կենցաղին ասպետական դարերուն

ՈՒր պաշտվեցավ Գեղեցիկն ու Զորությունը արթուն,

Եվ խորհրդանիշը անմահ Գեղեցիկին, Զորության

Փըրփուրներու Դիցուհին ըստինքներով ռոշնական...[Յեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան 1981թ. էջ 464]

Չկար կեղծիքը, սուտը, անարդարը... «ՈՒր մարդիկ հզոր ու անկեղծ էին նման գինիին»:

Հեթանոս դարերի մարդը կատարելատիպ է իր բնությամբ: Նկարագրելով ասպետական սրերի ու տեգերի փայլը՝ բանաստեղծը դրանք վեր է դասում ամեն մի մանրախնդրությունից, որով այնքան բնորոշ էր իր ժամանակաշրջանը: Այս մարդիկ իրենց ուժերը սպառում էին պատերազմներում և որսերի ժամանակ՝ տալով այն «առյուծներու քաջության»:

Նա չի իդեալականացնում, այլ հակադրում է իր ժամանակին: Այդ հզոր ու անկեղծ մարդիկ օժտված էին նաև հոգու գեղեցկությամբ: ՈՒժը, գեղեցկությունը փոխարինվել են նենգությամբ, առաքինությունը՝ ստորությամբ ու նենգությամբ: Այսօր մյունխենյան գարեջրով աճուրդի է հանվում սերը: Այն գտնվում է, դառնում առուծախի առարկա: Կինը կորցրել է իր վեհությունը «ոսկի հորթի» պաշտամունքի պատճառով:

Բանաստեղծը բողոքում է մարդու ստորացման դեմ, «ըղեղին տակ կըքած» մարդուն հակադրում «հեթանոս ասպետներին»։

Նրանք «վագրի լյարդ» ունեցող դյուցազուններ են՝ առողջ, ուժեղ ու գեղեցիկ, նրանցով է մարդկային ցեղի հզորությունը չափվում։ Նրանց դեմ փոքր ու չնչին են երևում աղճատված ու աղավաղված նորօր մարդիկ։

«Գունատ մարդերեն» ոճիրներ են ծնվում, իսկ նրանց աչքերով ասպետները գազաններ են թվում։

- Ո՜վ ասպետներ հեթանոս, եթե բախե ոտքն հանկարծ
Ձեր բազուկի մեկ ոսկրին՝ որ հողին տակ ճերմկած է,
Անոր հըսկա զանգվածեն կը սարսափի, կը կարծե
Ձեզ առասպել դարերու առասպելյալ գազաններ,
Ո՜վ ասպետներ հեթանոս, ո՜վ ասպեսի ոսկորներ։

ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Վարուժանը հարազատ մնալով թեմային և ժամանակաշրջանին, օգտվել է «գրաբարի պղնձի բովեն հանված զենուզարդից» [Հ. Ռշտունի, Դ. Վարուժան, Երևան 1961 թ. էջ 195], որի շնորհիվ ստեղծել է կենդանի պատկերներ, վեր է հանել հին դարերի ոգին, բարքերն ու կենցաղը։

«Մեծ բանաստեղծի երևակայությունը թռչում է», «արևաբիբ Բեգասի» պես՝ համարձակ ու լայն սավառնումներով, ստեղծում թարմ մակդիրներ և գեղեցիկ փոխաբերություններ, որոնցով այնքան հարուստ է Վարուժանի պոեզիան՝ ստեղծելով մեկը մյուսից պայծառ և շնչավոր պատկերներ։ [Հ. Ռշտունի, Դ. Վարուժան, Երևան 1961 թ. էջ 200]։ Պոեմում օգտագործված են և՛ նորաբանություննեև և՛ հնաբանություններ։

Պոեմն արտահայտիչ և տեսանելի են դարձնում գեղարվեստական պատկերավորման միջոցների լայն կիրառությունը, մեր վիպական երգերին բնորոշ ժողովրդական մտածողությունը, հերոսների կերպարների առասպելական լինելը։

Անչափ հարուստ է «Հարճը» պոեմի բառապաշարը։ Պոեմի թանձր պատկերների մեջ Վարուժանը օգտագործել է հայոց լեզվի անսպառ հարստությունն ու ճկունությունը՝ իմաստալից համեմատությունների, մակդիրների ու այլաբանությունների տեսքով։

Օ

գտագործված բազմաթիվ մակդիրներով նա բնորոշում է և՛ անձ, և՛ բնություն, և՛ գործողություն, որոնք երբեմն երկբաղադրիչ են, երբեմն՝ բազմաբաղադրիչ։

Ահա պոեմում հանդիպող մակդիրները.

Գինեփոփուր բաժակ, հեղեղ վարդերու, գավաթ հրահոսան, լույսերի հոծ ծով, սանձակոտոր ճախրանք, աստղահեռ բիբ, գեղեցկության աղոթք, քար հոգի, կախարդ սրինգ, շոգի քմհար, վիժնանուտ վարսեր, ավիշ կենսահորդ, ճամբա հրատոչոր, լույս մարմին, շոգի քմպարա, մսեղեն աղոթք,տարփակեզ սիրտ, ծոծրակ լուսաբուխ, մետաքսե գանգուրներ, սառած լուսարձան։;

Շատ են հանդիպում համեմատություններ հատկապես նկարագրությունների ժամանակ։ Նույնիկս զգայականն ու վերացականը դառնում են տեսանելի ու շոշափելի, պատումը՝ առավել հետաքրքրական։ Ահա մի քանի օրինակներ։

Հեղեղ մը հանկարծ վարդերու, իբրև ամեն կին վար կարձակեր սիրտն իր աղու, կիներն իբր ճձ գեղածալ, նըման արծաթ կարկուտի երգ ջաղբեց դափ դողդոջ, արշալույսի մը նման, վարդի մը պես բռընկած, մամնույն պես դյուրազգա, լճակի պես կարմիր, իբրև քանասար, որ կինն իր տան մեջ կը լլեր՝ իբր իր ողկույզն իր տաշտին, ծովուն խորն ընկլուզվող գունդերու պես հրատեսիլ...

մարդիկ հզոր և անկեղծ էին նըման գինիին, գլուխն իբրև լուսընկա, թռավ նման արծիվին, ջրվեժին պես փրփրալի, հրախայթոց օձի պես շըշըչալով, վայրենիի մը նման...

Կան նաև փոխաբերություններ։

... Որոնց շոգին քըմպարար կը բարձրնա ոլորում

Եվ յոթնաղիքը շուրջ կազմելով խլատեռեր ծըփծըփոհ

Նվագի ծով մի սկսավ մըրըրկոտիլ աղեբախ։

Ահա առվտան շողերեն հագեր էր վարդ ու սուտակ

Պատուհանի առջևիթ թզենին ծառն ընդարձակ։

ԲԱՌԱՐԱՆ

Անուղղա – անուղղելի

Աղու – քաղցր, հաճելի

Աղածրի – մատղաշ

Աղկիոն – ծովային թռչուն

Ագուռ – բուռ, ափ

Արդընկեց – տեգահար

Ապշոպյալ – հուզված

Արդնահար – վիրավոր

Անարդիլ – վիթխարի

Բրածեծ – ծեծված

Գերեր – սունկ

Դափրել – վարգել

Դոույթ – արշավ, գրոհ

Դաշխուրան – թաս

Դարալիր – փարթամ

Դիրտ – մրուր

Եղկ – գող

Երաստան – նստատեղ

Զոպալ – դողալ

Զահանղած – զարհուրած

Զիստ – ազդր

Զառքաշ – ոսկեհատ

Ընգոգել – խորանալ

Ժահր – թարախ, թույն

Լուսածղի – լուսաթև

Խոպալ – կատաղել

Բլա – պատմուճան

Խենեշ – լկտի, անպատկառ

Խլատեռեր – շղարշ

Խրամ – խրախճանք, կերուխում

Խեռ – ըմբոստ

Խոպալ – առաջ մղել, խոյանալ

Կումբ – վահանի մեջտեղի ուռուցիկ մասը

Կուճ – կճուճ

Կտղանք – տոպանք

Հիր – կարմիր, ծիրանագույն

Հեղակարծ – հանկարծ, հանկարծակի

Համորեն – բոլոր, բովանդակ

Հափափում – ծուլորեն, դանդաղորեն

Հույր – գեր, պարարտ

Ղողել – ծածկել, գոցել թաքցնել

Ճապուռ – ճիրան, մագիլ

Ճոշ, ճոշան – զրահ

Մախանք – նախանձ, չարություն

Մատռվակ – գինի մատուցող

Նվարտան – ծածկոց

Շամբուշ – կրքոտ, պագշոտ

Շրուշակ – սանձ, բերանակալ

Շամբել – կրքով բռնկվել

Շմուր – շփոթ, աղմուկ

Շառայլ – ճառագայթ

Ողոքել – աղերսել

Ոգոտ – կռիվ

Պարտասուն - հոգնած

Ջաղբել – տեղալ

Ջանջիլ – կտորի ազնիվ տեսակ

Ռոշնական – լուսավոր, պայծառ

Սեղեխ – սիրեկան, տարփածու

Սան – պղնձյա կարաս

Սարդենի – դափնի

Սրարբած – խիստ գինովցած, սիրով արբած

Սնդուս – դիպակ, նուրբ կերպաս

Սեպուհ – ասպետ, ազնվական

Սաղապ – հեղհեղուկ, անհաստատ

Վարմ – թակարդ

Տրղնդեր – ուռած փորով, տռզած

Տոսախ – ընտիր փայտ

Փապար – խոռոչ, քարանձավ

Փաղփուն – փայլուն, պսպղուն

Փցուն – անպետք, պիղծ

Քրեիրքուր – գարշելի, վատթար

Քեմուխտ – կոկած կաշի

Քանասար – կատաղի գայլ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պոեմում արծածված գաղափարները արդիական են նաև այսօր։ Պոեմի ուսուցումը աշակերտներին հնարավորություն է տալիս գնահատելու այն արժեքները, որոնք բոլոր ժամանակներում անհրաժեշտ են մարդուն՝ պահելու իր տեսակը՝ իր հոգու և մարմնի գեղեցկությունը, չաղճատել այն ամենը, ինչը նրան դարձնում է կատարյալ։

Պոեմը վեհի, ուժի ու գեղեցկության գովքն է։

Պոեմի բոլոր կերպարները ոգով ապրելու իրենց եղանակով օրինակելի են։ Այստեղ ներկայացված է հայոց պետականության ամենազորեղ շրջանի ոգու ուժը։ Դարեր շարունակ հայ մարդը փայփայել է ուժի զորություն գեղեցկության, փառքի ու վայելքի իդեալը։ Որքան ծանր ու դաժան է ժամանակը, այնքան մեծ է ձգտումն ու երազանքը։

Հակադրվելով ժամանակակից մարդու փոքրությանը՝ բանաստեղծը փառաբանում է լիարժեք կյանքը, առողջ ու գեղեցիկ մարմինը, հզոր ու անկեղծ մարդու ազատ կամքը, խիզախությունն ու ուժը։ Պոեմը ձոն է՝ նվիրված ասպետականությանը, զորությանն ու գեղեցկությանը, անկեղծ ու մաքուր սիրուն։ Սովորողների մեջ պոեմի հերոսների կերպարների միջոցով դաստիարակել ազնիվ, առաքինի ու ազատատենչ, համարձակ ու արիության ոգով տոգորված անհատներ։ Պոեմի միջոցով հակակշռել մեր օրերում տիրող նենգությանը, ստրկամտությանը, ոգու խեղճությանը։

Համամարդկային գաղափարներով տոգորված այս գեղեցիկ կոթողը կնպաստի բարոյական ու ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերնդի դաստիարակմանը, ազգային, բարոյական ու հոգևոր ար-եքների պահպանմանն ու փոխանցմանը։

Արժեքներ, որոնց կրողը պետք է լինի նաև քսանմեկերորդ դարի մարդը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ս. Աղաբաբյան, Դ. Վարուժան, Երևան 1980թ.
2. Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Հ. 1 – 4, Երևան 1976թ.
3. Մ. Խորենացի, Հայոց պատմություն, Երևան 2009թ.
4. Հայ ժողովրդի պատմություն, Հ. 1, Երևան 1976թ.
5. Հայ գրականություն, Դ.Գասպարյան, Ժ. Քալանթարյան, Երևան 2010թ.
6. Լ.Մնացականյան, Քսաներորդ դարասկզբի արևմտյան հայ գրական քննադատություն, Երևան 1990թ.
7. Հ. Ռշտունի, Դ. Վարուժան, Երևան 1961թ.
8. Պ. Սևակ, Վարուժանի պոեզիան, Հ. 3, Երևան 1983թ.
9. Ա. Սուքասյան, Հոմանիշների բառարան Երևան 1965թ.
10. Դ.Վարուժան, Երկեր, Երևան 1984թ.
11. Դ.Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1986թ.
12. Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Երևան, 1981թ.